

Հ. ԿՂԵՄԷՍ Վ. ՍԻՊԻԼԵԱՆ.

ԴԵՍԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆ ԴՐԱՄՈՅ,

Գիրքը բաղկացած է հետևեալ մասերից. 1. Հեղինակի պատկերը գրքի ճակատին. 2. Հրատարակիչ Հ. Գրիգորիս Վ. Գալէմքարեանի յառաջաբանը, 3. Մատենագրութիւնը Ռուբինեան գրամոց, 4. Բնագիրը բազմաթիւ նկարներով, 5. Վեց վիմատիպ տախտակներ, և 6 Յաւելուած առաջին անգամ հրատարակուած գրամների: Էջեր ԺԶ+88+30. Տպագրութիւն. օրինակելի է, ընտիր:

Պատմութիւն ուսումնասիրելու էական պայմանն է ուսումնասիրել աղբիւրները. լինին դոքա գրաւոր յիշատակարաններ, թէ ուրիշ տեսակի միայն թէ վաւերական լինին, միայն թէ կարողանան մեզ հետաքրքրող պատմական շրջանի ճիշտ, հաստատուն պատկերի վերականգնմանը օգնել: Անցել են դարեր, մարդիկ իրանց նախնիքների մասին միայն այնքան են իմացել, ինչ նոքա գտել են հին ժամանակագրութիւնների, հին quasi պատմութիւնների մէջ յիշատակագրած: Սակայն ներկայ դարուս խիստ քրնական ուղղութիւնը պահանջում է և ձգտում միանգամ արդէն գիտութիւն անունը կրող առարկայի մէջ վերականգնել ըստ կարելոյն անպայման ճշտութիւն մարդկային խելքի, աշխատասիրութեան միջոցաւ: Պատմութեան համար մենք չենք բաւականանում ինչ մեր նախնիքը մեզ աւանդել են, այլ փորում ենք երկրի խորքերը, մաքրում հին փլատակները նրանց մեր աչքից ծածկող դարեւոր զանգուածից, ի մի ժողովում աղիւսների վրայ, քարերի, ժայռերի վրայ փորած տառերը, նախադասութիւնները, հատուածները և այդ բոլորը մի նպատակի համար՝ ունենալ ճիշտ պատկերը նախահարց կեանքի, նոցա գործերի:

Հին ազգերի մէջ ընդհանուր մարդկութեան քաղաքակրթութեան համար ոչ մի ազգ այնքան խորը, տեղական և բազմակողմանի հետքեր չէ թողել ինչքան Յոյները, մասնաւորապէս Աթենացիք, նրանից յետոյ Հռովմայեցիք: Նրանց գրականութեամբ,

նրանց գեղարուեստներով, նրանց փիլիսոփայութեամբ և այլն կրթութեամբ մինչև օրս մարդկութեան կրթութեան սերունդի մեծ մասը, այդ հանգամանքը ստիպել է այդ ազգերի անցեալի հիմնովին ուսումնասիրութեան, նոյն այդ ուսումնասիրութիւնը ուղեցոյց եղաւ նաև՝ թէ ինչպէս պէտք է ուրիշ՝ թէև ոչ նոցա չափ նշանակութիւն ունեցող, հին ազգերի անցեալը ուսումնասիրել:

Յունական և Հռոմէական արձանագրութիւնների ժողովածուները այսօր բաղմաթիւ հատորներ են կազմում: Դոցա հրատարակել է Բերլինի գիտութեանց ճեմարանը *Corpus inscriptionum Graecarum, Latinarum, Atticarum* անուններով և գոքա օգնութեան պարգելու պատմութեան մէջ շատ մութ մնացած կէտեր, ուղղել գրաւոր յիշատակարանների պակասութիւնը, նոցա սխալները: Նոյնպիսի մեծ ծառայութիւն է մատուցանում այժմ նաև դրամագիտութիւնը: Հին դրամներ ժողովելու սովորութիւնը աւելի շուտ է սկսել: Նորա արժէքը, վրայի գրութիւնը, նկարները թանկագին են կացուցանում նրան անխտիր կերպով թէ կրթեալի, թէ անկիրթի համար՝ միայն ի հարկէ տարբեր նպատակների համար: Ուսումնականը գնահատում է նրան ըստ հրնութեան, ըստ հաղուագիտութեան, հասարակ մահկանացուն ըստ կշիռի, ըստ մետաղի:

Եւրոպայում ամեն տարի լոյս են տեսնում բոլոր յայտնի լեզուներով դրամագիտութեան (*Numismatique*) նուիրուած մեծ և փոքր բաղմաթիւ աշխատութիւնների, քիչ չէ նաև դրամագիտութեան նուիրուած ամսաթերթերի թիւը: Իսկ մենք հայերս, որ հպարտանում ենք մեր հարեան ազգերի մէջ իբրև առաջինները եւրոպական լուսաւորութեան հոտը առած լինել՝ նաև համար, մենք հայերս ինչ ենք արել մեր հայրենեաց թանկագին հնութիւնները ժողովելու, ուսումնասիրելու համար: Մեր երկիրը լի է թէ աւերակների վրայ, թէ գերեզմանաքարերի վրայ և թէ ժայռերի վրայ փորագրած արձանագրութիւններով, ամեն մի քայլափոխում հանդիպում ենք անցեալի մնացորդներին, դոքա ամեն օր թէ բնութեան ազդեցութիւնից և թէ կոպիտ անհատ-

կացող անձանց հարուածներից, ոչնչանում անդառնալի կերպով կորչում են մեզ համար: Ժամանակ է, որ լուրջ ուշադրութիւն դարձնուէր այդ ցաւալի հանգամանքի վրայ, ժամանակ է որ սխէինք ժողովել դոցա կամ մի կենդրոնական աղգային թանգարանում, կամ իւրաքանչիւր քաղաք ունենար իւր շրջակայքի համար իւր թանգարանը, ինչպէս տէրութեան մի քանի քաղաքներում կան. օրինակ Րիգայում, Բեյլելում, Դորպատում ևւն: Մեր անձնական քաղած տեղեկութիւններից իմացանք, որ մեզանում թէ քաղաքացիների և թէ գիւղացիների մօտ կան մասնաւոր ժողովածուներ, հին անօթների, ղէնքերի, զարդերի, մասնաւոր դրամների: Սակայն այդ ժողովածուները ըստ արժանոյն չգնահատուելով ձեռքէ ձեռք են անցնում և կորչում անհետանում: Այդ մասնաւոր անձինքներից շատերը գուցէ հէնց իրանք կարողանային կարգաւորել իրանց ժողովածուները, եթէ ունենային փոքր ի շատէ դիւրամատչելի, ուղղութիւն ցոյց տուող հայերէն լեզուով ձեռնարկներ: Այդ կողմից կարող է մեծ ծաւալութիւն մտտուցանել Մ. Մխիթարեանց հրատարակած գիրքը, որ իւր տեսակում առաջին, և պէտք է ասած շատ յաջող փորձն է, մեր պատմութեան մի յայտնի շրջանի հնութեանց մի մասը, այն է դրամները հրատարակել և լուսաբանել:

Հեշտից գէպի գժուար տանող ճանապարհը միշտ աւելի ուղիղն է և նա է նպատակին հասցնում: Հ. Սիպիլեանը առաջ Ռուբինեան դրամները ուսումնասիրելով, որոնցից համեմատաբար աւելի շատ նիւթ ունինք, մեծ դիւրութիւն և յարմարութիւն է ունեցել մեզ մի անընդհատ, ամբողջական պատկեր տալու այդ հարստութեան օրով գործածական համարեայ բոլոր դրամների մասին: Հազիւ թէ նոյն բանը յաջողուէր նրան, եթէ նա մեր մի ուրիշ հարստութիւնից սկսէր: Աչքի անցնելով նրա առաջ բերած Ռուբինեան դրամների ուսումնասիրութեան նուիրած 31 փոքր աշխատութեանց ցանկը նկատում ենք, որ հայերէն գրուել են միայն եօթն աշխատութիւններ, իսկ մեծ մասը օտար լեզուներով են:

Հրատարակչի յառաջաբանից իմանում ենք, որ Հ. Սիպիլեանը

դեռ իր աշակերտ եղած ժամանակում առանձնապէս ուշա-
գրութիւն է դարձնում գրամագիտութեան վրայ և երբ 1815
թ. (նա ծնուել է 1824 թ.) քահանայ է ձեռնադրւում սկսում է
շարունակ պարապել իր սիրած ճիւղով: Նա պտտում է ամբողջ
Հայաստանում, ամեն տեղ դրամներ ժողովում և միևնոյն
ժամանակ գրաւոր աշխատութիւններով շարունակ տեղեկու-
թիւններ է հաղորդում գիտնական աշխարհին: Վիեննայի Մխի-
թարեանց թանգարանում այժմ կան 15,000 ից աւելի հին
դրամներ, 220-ը Արշակունեաց, 2,232 Ռուբինեանց ժամանա-
կից և այդ «Հ. Սիպիլեանի ջանից շնորհիւ»: Հեղինակի շուտաւիթ
մահը արգելք է լինում սեփական աշխատութեանն հրատարա-
կութեանը, երկար նրա պատրաստի ձեռագիրը մնում է աղգա-
կանների մօտ, մինչև մ. Միաբանութիւնը գնում է և լոյս ըն-
ծայում:

Ռուբինեան դրամների մեծ մասը արծաթ և պղինձ են, ոսկին
հազուադէպ է: Արծաթը Հ. Սիպիլեանը բաժանում 1. երկ-
դրամի, 2. Դրամի, 3. Կիսադրամի և 4. Արծաթապը-
ղընձի, իսկ պղինձը նա ընդհանուր անունով կոչում է փող:
Արծաթեայ հին դրամները և երկդրամները աւելի զուտ են և
կշիռքով ծանր, քանի գնում կորցնում են այս յատկութիւննե-
րը, նոյնը կարելի է ասել նաև արեւեստի համար: Այդ տե-
սակէտից տարբերութիւն կայ նաև երկար տարիներ թագաւոր
անձի դրամների մէջ, սկիզբը լաւ՝ վերջը վատ. թէև ընդ-
հանրապէս տեղի են ունենում նաև ել և էջներ: Դրամների
մէջ կան այնպիսիները՝ որոնք նոյն անունը կրող զանազան թա-
գաւորների են պատկանում, օրինակ Ղևոն Բ. — Զ. Հեթում Ա.
և Բ. Կոստանդին Բ. — Դ. ի դրամները մեծաւ մասամբ նոյն գրու-
թիւնը ունին, և ստի հեղինակը կարողացել է նոցա ըստ պատ-
կանելոյն դասաւորել վարժուելով մեծաքանակ (3000) ժողովա-
ծուի համեմատութեամբ:

Ոսկի դրամներ ունենք Ղևոն Բ. — ից, Հեթում Ա. և Ղևոն
Դ. ից, Կոստանդին Բ. ից, իսկ արծաթի և պղնձի դրամներ հա-
մարեա բոլոր թագաւորներն ունին: Դրամների ընդհանուր ձևն

է՛ մի երեսի վրայ թագաւորի գաշի վրայ բազմած պատկերը, միւս երեսին վրայ երկրի զինանշանը, կամ մի պսակաւոր առիւծ թաթում խաչ բռնած, կամ երկու իրար նայող առիւծներ մէջ տեղում կրկնաթեւ խաչ: Առաջի երեսի գրութիւնն է օրինակ «ԼԵՒՈՆ ԹԱԳՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ» միւս երեսի վրայ «ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ» կամ ինչպէս պղնձի գրամներն են. մի երեսի վրայ նստած թագաւորը, կամ պսակած առիւծի գլուխ, միւս երեսին խաչ. գրութիւնը «ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅ Դ», միւս երեսին «ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍԻՍ»: Այս է ընդհանուր ձեւը, իսկ տարբերութիւններ բազմաթիւ են: Դրամներից նկատուած ենք. որ Սուրբինեանք իբրեւ երկրի զինանշան գործ են գրել կամ խաչ, կամ մի առիւծ թաթում խաչ բռնած, կամ երկու յետեւի ոտների վրայ կանգնած երեսները իրար դարձրած առիւծներ միջում խաչ: Խաչերը կամ կրկնաթեւ են կամ միաթեւ: Այդ բոլորն էլ միաժամանակ իրար մօտ գործ են գրուել: Ունինք այնպիսի դրամներ էլ, որոնց մի երեսի գրութիւնը հայերէն է, իսկ միւս երեսին փոխանակ զինանշանի գտնուած ենք արաբերէն գրուածք: Դոքա կտրուած են Հեթում Ա-ի ու Ալաէտտին Քայ-քոպատի և Հեթում Ա-ի ու Ղայասէտտին Քայխոսրովի երկու իշխանների անուէով: Դրամների վրայ թագաւորները երեւում են երբեմն ձիու վրայ նստած շուշանաձեւ գաւազան կամ խաչ ձեռներին: Առանձին հետաքրքրութիւն ունի Կոստանդին Բ-ի մի արծաթադրամը: Դրամի մի երեսի վրայ կանգնած է թագաւորը հանդիպահայեաց [vu de face] մի ձեռքում խաչ միւսում սուր, շուրջը գրած ԿԱՐՈՂՈՒԹԻՆ ԱՅ Է ԹԱԳՐ, միւս երեսին ձիու վրայ նստած է հանդիպահայեաց աջ ձեռին սուր, ձախը կրծքին դրած, շուրջը գրած է. ԿՈՍՏԱՆԴԻՆԱՆՈՍ ԹԳՐ ՀԱՅ: Իւրաքանչիւր դրամ առանձին վերցրած դարձեալ մեծ հետաքրքրութիւն ունի:

Ահա մի գիրք, որ արժանի է զարգարելու իւրաքանչիւր հայի սեղան, կիթէ թանկ են նրա համար իւր նախնեաց յիշատակարանները, եթէ նա ցանկանում է այդ յիշատակարանների անփոփոխ պատկերը իւր առաջ ունենալ: